Նունե Ջոմարդյան
ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ «ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ»-ՈՒՄ

Հոդվածում վերլուծված են Շ.Շահամիրյանի գաղափարները իրավունքի, ընդհանուր բարօրության և սոցիալական արդարության վերաբերյալ: Ներկայացված են այն իրավադրույթները, որոնք սահմանում են պետության պատասխանատվությունը մարդկանց հավասարության և սոցիալական արդարության ապահովման հարցում: Առանձնացվել և մեկնաբանվել են հարկային քաղաքականությանը, բյուջեի վերաբաշխմանը, տնտեսական հարաբերությունների կարգավորմանը և սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությանը վերաբերող դրույթները՝ կապելով նաև այսօրվա իրողությունների հետ:

Հիմնաբառեր. օրենքի գերակայություն, ընդհանուր բարօրություն, սոցիալական արդարություն, հարկեր, բյուջե, տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորում, սոցիալական իրավունքներ:

Արդի ժողովրդավարական և սոցիալական ուղղվածություն ունեցող հասարակության ներգործության արդյունքում տեղի է ունենում սահմանադրական իրավունքի սոցիալականության խորացում: Սոցիալական-իրավական կարգավորման ազդեցության են ենթարկվում անգամ սոցիալական խնդիրների հետ ուղղակիորեն կապ չունեցող հարաբերությունները: Իհարկե, դա չի նշանակում, որ պետության սոցիալականության խնդիրները միայն նոր ժամանակաշրջանին բնորոշ դրսևորումներ են:

Սոցիալականության որոշակի տարրեր բնորոշ են եղել բոլոր ժամա-

նակների պետություններին, որոնք, աստիճանաբար ձևավորվելով մարդկանց փոքր խմբերում, կոչված էին լուծելու «ընդհանուր գործեր», որոշակի շրջանակների մեջ դնելու օբյեկտիվորեն անհավասար անհատների և խմբերի միջև առկա մրցակցությունը, չեզոքացնելու անարխիան և հասարակության փլուզումը[1]: Պետության ընդհանուր սոցիալական (համասոցիալական) գործառույթներից են եղել, օրինակ, ոռոգման համակարգերի ստեղծումը հողագործության համար, սոցիալապես անապահով մարդկանց օժանդակելու միջոցառումների սաղմերի ձևավորումը, իշխանավորների կողմից աղքատներին ողորմություն տալու սովորույթը: Սակայն աջակցության այդպիսի միջոցառումներն ունեցել են անհատականացված բնույթ և չեն դիտվել որպես պետության պարտականություն, իսկ տնտեսության կարգավորման խնդիրները չեն դիտարկվել սոցիալական տեսանկյունից:

Պետության հասարակական դերակատարության փոփոխությունը, տնտեսական հարցերի կարգավորման միջամտությունը և սոցիալական խնդիրների լուծման պարտականության ստանձնումն ու իրագործումը, համաձայն գիտական գրականությունում առկա մոտեցումների, սկիզբ են առել 19-րդ դարի երկրորդ կեսից: Գերմանացի պատմաբան, փիլիսոփա և տնտեսագետ Լորենց ֆոն Շտեյնի խոսքերով «պետությունը պետք է հարուստների և հզորների մակարդակին բարձրացներ աղքատների և ընչազուրկների դասերը[2], քանի որ սուր բևեռացումը հարստության և աղքատության միջև կարող էր հանգեցնել սոցիալական պայթյունի և ցնցումների[3]: Դա նշանակում էր, որ ձևավորվող սոցիալական պետությունը կոչված էր անձի համար ապահովել ոչ միայն քաղաքացիական (հատկապես՝ ձևական ազատության) և քաղաքական, այլ նաև սոցիալ-տնտեսական իրավունքները, որոնց իրագործումը, ըստ մեզ, իրագործելի էր միայն ժողովրդավարական վարչաձև ունեցող պետությունում[4]:

Չնայած այն հանգամանքին, որ սոցիալական պետականության տեսական հայեցակարգերը նոր էին, դրանք հիմնվում էին անցյալի փորձի, նախորդ սոցիալական, քաղաքական և իրավական տեսության և պրակտիկայի ձեռքբերումների, պատմականորեն ձևավորված և փորձարկված համամարդկային արժեքների և մարդասիրական ավանդույթների, արդարության, ընդհանուր բարեկեցության վերաբերյալ փիլիսոփայական հայեցակարգերի վրա:

Բովանդակային առումով սոցիալական պետության վերաբերյալ առանձին գաղափարներ առաջ են եկել դեռ հին ժամանակներից Հնդկաստանի, Չինաստանի, Հին Հունաստանի և Հին Հռովի գիտամշակութային ժառանգության մեջ: Մարդկանց արդար և արժանապատիվ կյանքի մասին երազանքներ արտահայտել են այնպիսի անտիկ փիլիսոփաներ, ինչպիսիք են

1 Տես В. Е. Чиркин Конституция и социальное государство: юридические и фактические индикаторы. Журнал российского права, Юридическое издательство «Норма»(Москва). 2008 № 12, էջ 25:
2 Տես նույն տեղում, էջ 24:
3 Տես Проблемы общей теории права и государства: Учебник для вузов / Под общ.ред.академика РАН, д.ю.н., проф.В.С.Нерсесянца. М., 2002, էջ 698-699:
4 Դրան հակառակ՝ որոշ հետազոտողներ ընդունում են սոցիալական պետության գոյությունը նաև ոչ ժողովրդավարական (ավտորիտար) պետություններում:

Հերակլիտը, Դեմոկրիտը, Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը, Սենեկան, Ցիցերոնը, ավելի ուշ՝ կյանքի արդար կառուցվածքի մասին ուտոպիստական ուսմունքների հեղինակներ Թ.Մորը և Տ.Կամպանելլան: Այդ գաղափարները խորը իմաստավորում են ստացել նոր ժամանակների դասական տնտեսագիտական մտքի հիմնադիրներ Ա.Սմիթի, Ռ.Օուենի, Ջ.Լոքի, Դ.Ռիկարդոյի աշխատություններում, հումանիստական գաղափարների հեղինակներ Ժ.Ժ.Ռուսոյի, Շ.Ֆուրյեի, ինչպես նաև Շ.Լ.Մոնտեսքյեի, Տ.Ջեֆերսոնի և այլոց մոտ: Պետության սոցիալական դերի ընկալման Ժ.Ժ.Ռուսոյի, իսկ հետագայում նաև Շ. Ֆուրյեի, Ա. Սեն-Սիմոնի գաղափարները ուղղված էին ոչ միայն տեսականորեն հիմնավորելու, այլ նաև գործնականում ստեղծելու արդար և խելամիտ հասարակության նմուշօրինակ, որտեղ բոլորը հոգ կտանեին յուրաքանչյուրի մասին, և յուրաքանչյուրը՝ բոլորի մասին: Չհերքելով անհատական ազատությունների նշանակությունը՝ նրանք համարում էին, որ հասարակության մեջ ամեն ինչ պետք է կառուցվի հավասարության և սոցիալական արդարության սկզբունքների հիման վրա, որոնք պետք է ապահովի պետությունը[1]:

Վերջիններիս գաղափարական հայացքներին մոտ էր կանգնած հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայ լուսավորական գաղափարախոսության հիմնադիր, սահմանադրական պետականության գաղափարակիր Շահամիր Շահամիրյանը, ով իր 1773թ-ին հրապարակած «Որոգայթ փառաց» հուշարձան աշխատությունում տեսականորեն հիմնավորեց և օրենսդրորեն ամրագրեց պետության այնպիսի նմուշօրինակ, որը, հեղինակի համոզմամբ, հնարավորություն էր տալու հայ ժողովրդին ստեղծելու ժողովրդավարական, սահմանադրահիրավական սկզբունքների, այդ թվում՝ հավասարության և սոցիալական արդարության վրա հիմնված ազատ և անկախ Հայաստան: Վերջինս էլ, առաջնորդվելով և սահմանափակվելով ժողովրդի համընդհանուր կամքով, ապահովելու էր երկրի բարգավաճումն ու զարգացումը:

Հայոց պետականության վերականգմանն ուղղված մտածողի իրավաքաղաքական հայեցակարգի կենտրոնական հարցերից էին ազատությունն ու հավասարությունը, որոնք հեղինակը քննարկում է բնական (աստվածային) իրավունքի դիրքերից: Ըստ այդմ, «մարդն իր բնությամբ երկրի վրա ի բանականե ծնվում է հավասար» և ոչ ոք չէր կարող «հրամայել ի վերայ բնութեան մարդոյ, բայց միայն անսկիզբ և արարիչ Աստուած»[2]: Մարդկանց խնդիրն էր ընդունել այդ օրենքները և հետևել դրանց իրենց կյանքում: «Եթե ցանկանում եք ազատ լինել և հավասարապես թագավորել ձեր աշխարհի վրա և ազատ ձեր ունեցվածքի վրա, պատվի արժանանալ ձեր առաքինության համար..... հարկավոր է ընտրել բարի օրենքներ՝ հավասարապես բոլոր մարդկանց կամքի և ցանկության համաձայն՝ ձեր բանական

1 Տես Ա.Ա.Մանուկյան Սոցիալական պետության էությունը և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան արդի դարաշրջանում: Ատենախոսություն....իրավաբ. գիտ. թեկ. ... հայցման, Երևան, 2015, էջեր 12-13:

2 Տես «Որոգայթ փառաց»/ Շարադր.՝ Յ.Շահամիրեանց, Թիֆլիս, Էլէքտրատպ.օր. Ն.Աղանեանցի, 1913, էջ 25:

հոգու հնարավորություններից ելնելով, որպեսզի չլինի մեկը, որ իշխի ձեր վրա, բացի ձեր օրենքից»: Աստվածային օրենքների ճիշտ ընկալումն ու իրագործումը կյանքում կարող էր ստեղծել այնպիսի պետություն, որտեղ յուրաքանչյուրը կլիներ ազատ և հավասար անկախ իր քաղաքական, սոցիալական և տնտեսական դիրքից, դավանանքից և ազգությունից: Աշխատության օրենսդրական մասի 3-րդ գլխում[1] նշվում է. «Յուրաքանչյուր մարդկային բնություն թե՛ հայ և թե՛ այլ ազգից՝ ծնված Հայաստան աշխարհում և կամ օտար երկրից պանդխտած Հայաստան, թե՛ արական և թե՛ իգական սեռին պատկանող, ամենքն էլ ապրելու են համահավասար ու ազատ են լինելու իրենց բոլոր գործերում. ոչ ոք ոչ մեկի վրա իշխելու իրավունք չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապատասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Հայոց օրենքի»:

Ըստ Շահամիրյանի՝ եթե մարդիկ լինեն «համահավասար, իշխան և տէր և ժառանգ աշխարհին ... հնազանդ» և ենթարկվեն միայն իրենց կողմից ընդունած օրենքներին, ապա այդ երկրում կապահովվի «բոլորովին բարութիւն հասարակաց»[2], այն է՝ ընհանուր բարօրություն: «Հավասարապես ողջ ժողովրդի կամքին և ցանկության համաձայն» ընդունված օրենքը՝ որպես համընդհանուր կամքի դրսևորում, կապահովի ոչ միայն անհատի իրավունքներն ու պահանջմունքները, այլ նաև ընդհանուրի շահը, ընդհանուր բարօրությունը: Հայեցակարգային նման մոտեցման պայմաններում օրենքի գնահատման հիմնական չափանիշ է դառնում հասարակական բարօրությունը, ու հավասարության նշան է դրվում օրենք, ընդհանրական շահ և ընդհանրական կամք հասկացությունների միջև[3], որոնց հասնելու հիմնական գրավականը անձի իրավունքների միասնական ապահովումն է:

Դիտարկելով ապագա հայկական պետությունը որպես ժողովրդավարական հանրապետություն՝ Շահամիրյանը հատուկ տեղ է հատկացնում իշխանության բարձրագույն մարմինների ձևավորմանը: Ըստ հեղինակի՝ անմիջապես ժողովրդի կողմից են ընտրվում ոչ միայն Հայոց տան փոխանորդները (պատգամավորները), այլ նաև մյուս բոլոր պաշտոնատար անձինք: Ընտրությունները բազմաստիճան էին, սակայն հիմնական դերակատարությունը պատկանում էր ժողովրդին: Նախագծի 14-րդ գլխի համաձայն՝ յուրաքանչյուր գավառից մինչև 12000 տուն ունեցող բնակավայրից, «բոլորի կամքի և հաճության համաձայն», ընտրվում էր արական սեռի մեկ ներկայացուցիչ: Այնուհետև այդ անձանցից (գավառներում) վիճակահանությամբ որոշվում էին երկուսը, ովքեր հետագայում պաշտոններ կզբաղեցնեին պետական իշխանության մարմիններում: Մ.Մ.Թելունցի բնութագրմամբ՝ չկար մի գյուղ կամ բնակավայր, որը չմասնակցեր «իշխանության՝ նրա մարմինների ձևավորմանը»[4]: Ընտրլու իրավունք էր տրվում գյու-

1 Շահամիրյանն իր հոդվածները շարադրելիս դրանք բաժանում է ոչ թե հոդվածների, այլ գլուխների:
2 Տես «Որոգայք փառաց» ..... էջ 36:
3 Տես Միրումյան Կ.Ա. Քաղաքական ուսմունքների պատմություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար/Խմբ. Վ.Ս. Թումանյան.-Եր.: Զանգակ-97, 2006, էջ 455:
4 Տես Թելունց Մ.Մ. Հայկական առաջին սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995թ. Սահմանադրությունը: ՀՀ սահմանադրության նոր նախագծեր (խմբ.՝Ն.Ա.Ապիյան), - Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2001, էջ 39:

ղի չափահաս դարձած (ամենայն հավանականությամբ՝ 18 տարեկան) բոլոր անդամներին: Սա նշանակում է, որ ընտրելու իրավունք էր վերապահվում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց: Սակայն սահմանափակում էր գործում ընտրվողների համար, քանի որ ընտրվել կարող էին միայն տղամարդիկ և այն էլ մի շարք պահանջների բավարարման դեպքում: Չնայած ընտրվելու իրավունքի այս սահմանափակմանը՝ մտածողը մեծ քայլ է անում դեպի ժողովրդավարության հաստատմանը՝ ընտրելու իրավունք տրամադրելով յուրաքանչյուրին:

Եթե համեմատենք տվյալ գործընթացն այլ երկրների հետ, ապա կարող ենք տեսնել, որ տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքը (բացառությամբ սևամորթների) ԱՄՆ-ում սահմանվել է 1860թ, իսկ ընդհանուր ընտրական իրավունքը՝ 1920թ., համատապասխանավար Գերմանիայում՝ 1871թ. և 1919թ., Մեծ Բրիտանիայում՝ 1918թ. և 1928թ., Ֆրանսիայում՝ 1848թ. և 1945թ., Դանիայում՝ 1849թ. (որոշ սահմանափակումներով) և 1918թ., Շվեդիայում՝ 1909թ. և 1921թ. և այլն[1]:

Նշված դրույթներից պարզ է դառնում, որ Շահամիրյանը ընտրական իրավունքով է օժտում բոլոր բնակիչներին՝ անկախ սեռից, ունեցվածքից և սոցիալական դիրքից: Փաստորեն անձի սոցիալական դիրքը չէր ազդում քաղաքական իրավունքների իրացման վրա: Հանգամանք, որը դեռ նոր պետք է հաստատվեր այլ երկրներում:

Ընդհանուրի կամքն արտահայտող և ժողովրդի բարօրությունն ապահովող օրենքի ընդունման գործառույթը «Որոգայթ Փառաց»-ը վերապահում է օրենսդրին՝ Հայոց տանը (գլուխ 15), իսկ դրա իրագործումը՝ գործադիրին՝ նախարարներին, որոնց ուղղակի պարտականությունն էր ապահովել երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը: Մեր կողմից ուսումնասիրվող հարցի տեսանկյունից հատկապես կարևորվում են կերակրապետության, տկարների և աղքատների պետի, հարկերի կարգադրության, ոռճկահատուցման պաշտոնավարողները:

Երկրի տնտեսական, պարենային խնդիրների լուծման պատասխանատուն էր Կերակրապետությունը: Նրա վրա է դրված գյուղմթերքների արտադրության, ստացված արտադրանքի ճշգրիտ հաշվառման, բնակչության թվի հետ պարենի զուգադրման գործի կազմակերպումը: Ըստ օրինագծի (գլուխ 111)՝ Կերակրապետությունը պետք է ամեն տարի աշխարհագիր անցկացներ՝ պարզելու երկրի բնակչության թիվը՝ դրան համապատասխան պարենավորումը կազմակերպելու, արտադրությունից ստացված եկամուտները Հայոց տան գանձարան մուծելու գործը և այլ աշխատանքներ համակարգված ձևով կազմակերպելու համար (գլուխ 70): Ըստ այդմ, հողի արդյունավետ օգտագործման ու դրանցից ըստ հնարավորինի եկամուտ ստանալու համար Կերակրապետության պարտականություններից էր հետևել, որպեսզի բոլոր սեփականատերերը մշակեն, վարեն, ցանեն և

1 Տես Ingmar J. Schustereder Welfare State Change in Leading OECD Countries. The Influence of Post-Industrial and Global Economic Developments. With a foreword by Prof. Dr. Joachim Ahrens. Dissertation European Business School, International University Schloss Reichartshausen, Oestrich-Winkel, 2009, էջ 44:

արդյունավետ օգտագործեն իրենց հողատարածությունները (գլուխ 109): Եթե որևէ մեկը չէր օգտագործում իրեն պատկանող հողամասը և անմշակ էր թողնում այն, պետությունն իրավունք էր ստանում ինքը վարելու՝ օգտագործելով այդ հողամասը: Իսկ եթե տերը 3 տարվա ընթացքում չէր դիմում հողամասը վերադարձնելու խնդրանքով, ապա այդ ագարակը (հողամասը) անցնում էր պետությանը (գլուխ 110): Փաստորեն այս դեպքում տեղի էր ունենում անարդյունավետ օգտագործվող սեփականության օտարում հասարակության և պետության կարիքների համար: Կարող ենք փաստել, որ այս դրույթն իր մեջ պարունակում է մասնավոր սեփականության սոցիալական պատասխանատվության սաղմը:

Ընդհանուր առմամբ սահմանադրության նախագիծը առանձնահատուկ մոտեցում է դրսևորվում հողի՝ որպես կարևորագույն արտադրության միջոցի սեփականության հարցում: Այն իր ամբողջ ծավալով պատկանում էր միայն Հայաստանի քաղաքացիներին: Օտարերկրացիները չէին կարող լինել հողի կամ բնակարանի սեփականատեր, սակայն նրանց տրվում էր դրանք վարձակալելու իրավունք: Ընդսմին Շահամիրյանն իր օրինագծի առաջին գլխում նշում է. «Հայոց երկրի երեսին կամ ծովի խորքում եղած ամեն անասուն ու կենդանի բոլորը միասին ժառանգությունը պիտի լինեն հայ ազգի»: Իրավագետի այս դատողությունների մեջ արտահայտված են երկրի ամբողջ բնական հարստությունների, անտառների, հողի, ընդերքի, ջրի նկապմամբ ժողովրդի բացառիկ իրավունք ունենալու գաղափարը:

Սահմանադրության նախագծում կարևոր նշանակություն ունեն նաև տնտեսական գործունեության ազատությունը սահմանող նորմերը: Մասնավոր ձեռնարկատիրական և առևտրային գործունեությամբ զբաղվելու համար թույլատրվում էր ազատորեն բացել առևտրի կետեր, շուկաներ և վաճառել ամեն ինչ: Այս գործունեության նկատմամբ պետության վերահսկողությունը նրանում էր, որ արգելվում էր վաճառել մահացու թունավոր դեղեր, առևտրի մեջ խաբել միամիտ և աղքատ մարդկանց, վաճառել գողացված իրեր, խաբել չափ ու կշռի մեջ և այլն: Հեղինակը նշում է, որ ամեն բան կարող է լինել առք ու վաճառքի առարկա, բացի մարդուց (գլուխ 121):

Պետությունը վարելու էր նաև տնտեսության առանձին ոլորտների զարգացմանն ուղղված խրախուսման քաղաքականություն: Նախ՝ բոլոր նրաք, ովքեր արմատավորում և զարգացնում էին նոր և հասարակական բարօրությանը նպաստող ու հասարակությանը օգուտ բերող շահավետ արհեստներ, պարգևատրվում էին պետության կողմից (գլուխ 119): Բացի այդ պետությունն իր միջոցներից օգնություն էր տրամադրում և խրախուսում այն մասնագետներին, ովքեր ներկայացնում էին փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության բնագավառները (գլուխ 127):

Պետությունը կանոնակարգում էր ապրանքների արտահանման և ներմուծման քաղաքականությունը: Ըստ նախագծի՝ յուրաքանչյուր ոք կարող էր վաճառքի համար երկրից ազատորեն արտահանել ամեն ինչ, բացառությամբ ոսկյա և արծաթյա արժեքների, ռազմական միջոցների (գլուխ

152): Ընդսմին, նրանք, ովքեր դրսից կներմուծեին Հայաստան ոսկի և արծաթ, կազատվեին հարկից և մաքսից: Բացի այդ, 154-րդ գլուխը թույլ էր տալիս արտահանել ոսկի և արծաթ, եթե այդ գործարքն ապահովելու էր մեծ շահույթ (երկրից տարված հարյուր դահեկան արժեքով արծաթի փոխարեն կներմուծի 130 դահեկան): Վերջինիս թույլատրվելու էր մինչև երկու տարի ազատորեն ցանկացած չափով ոսկի և արծաթ արտահանել երկրից:

Նպաստելով երկրի տնտեսական զարգացմանը՝ օրինագիծը սահմանում է հստակ հարկային քաղաքականություն՝ ուղղված ինչպես պետական բյուջեի ապահովմանը, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանությանը՝ «դյուրության, թեթևության ու հեշտության, հասարակ ժողովրդի բարօրության պաշտպանության համար» (գլուխ 31):

Հարկերի կարգադրության երեք պաշտոնյաները իշխանություն ունեին «բոլոր հարկերի և մաքսերի վրա՝ մեր ժողովրդի հեշտության համար, որպեսզի ոչ ոք՝ հարկապահանջները, մաքսավորները, հաս առնողներն ու բաժատերերը, նեղելով և խաբեությամբ և կամ վախեցնելով՝ ցորենի մի հատիկ անգամ չկարողանան ավելի վերցնել, քան [նախատեսված է] Հայոց կարգադրությամբ և մեր ժողովրդի կողմից» (գլուխ 75): Այս պաշտոնյաների պարտականությունն էր Հայոց տան ատյանում փոխանորդների առաջ հանդես գալ հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությամբ ընդդեմ զրկողների և օրենքի սահմաններում ջատագով լինել՝ «ի պաշտպանություն հասարակ ժողովրդի»[1]:

Երկրի ինքնուրույն հարկային քաղաքականությունն ապահովելու համար սահմանադրության օրինագիծը ընդգրկում է նորմեր առ այն, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է բոլոր տեսակի եկամուտներից (այդ թվում՝ նաև բեռների փոխադրումից, ներմուծումից և արտահանումից) տասնորդ վճարել պետությանը (օրինակ՝գլուխներ 345, 403-410): Այդ նորմերին համապատասխան՝ բյուջե վճարվող հարկերը բաժանվում էին 3 խմբի՝ միայն սննդից եկամուտի վճարում, զգեստի ծախս թե՛ հարուստ և թե՛ աղքատ անձերից և աղի գինը[2]:

Առանձնակի ուշադրության են արժանի այն հարկերը, որոնք գանձվում էին թանկ և գեղեցիկ իրերից: Այսպես օրինակ՝ «Նախշազարդ սենյակ ունեցողը և նրա մեջ բնակվողը՝ [պետք է վճարի] տարին հինգ դահեկան» (գլուխ 435), «Ոսկեպատ սեղան բազմողը տարին պետք է վճարի հազար արծաթ դահեկան» (գլուխ 443), «Ապակիով պատուհան ունեցողը՝ տարին տասը դահեկան» (գլուխ 434), «Մետաքսե խալու վրա նստողը՝ տարին հինգ դահեկան» (գլուխ 437), «Ամեն մարդ ազատորեն կարող է նստել միաձի կառք, իսկ եթե ավել [ձիերով] պետք է հարկ վճարի՝ ելնելով ձիերի քանակից» (գլուխ 440): Փաստորեն, ի տարբերություն Ժ.Ժ.Ռուսոյի, ով հանդես էր գալիս քաղաքացիների գույքային դրության հարաբերական հավասարեցման տեսանկյունից և այդ էգալիտար դիրքերից էլ քննադա-

1 Տե՛ս «Որոգայք փառաց» ..... էջեր 276-277:

2 Մանրամասն տե՛ս Թելունց Մ.Մ. Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը/ [Պատ. խմբ.՝ Վ.Ա. Դիլոյան] – Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, էջեր 258-267:

տում էր շքեղությունն ու ավելցուկը, հարստության և աղքատության բևեռացումը[1], Շահամիրյանը հարստության և աղքատության հակամարտությունը (անտագոնիզմը) լուծում է սոցիալական արդարության իրավական կարգավորման միջոցներով: Այս տեսանկյունից թանկ և գեղեցիկ իրերից գանձվող հարկը շատ ավելի մոտ է կանգնած ներկայումս որոշ երկրներում կիրառվող շքեղության հարկի գաղափարին: **Մենք առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում ևս լայնորեն կիրառել շքեղության հարկի գանձումը: Դա կանխում է սոցիալական բևեռացումը և բխում է հանրության շահերից:**

Շահամիրյանը, ում կարծիքով «հարկապահանջությունը չի գերազանցում տասնորդը», պահանջելով վճարել հարկեր նաև թանկարժեք իրեր ունենալու համար, պետության անունից սահմանում է, որ «տիրոջ պաշտպանությամբ բոլոր տարակուսանքներից ապահով ենք դարձնում, նաև երաշխավորում ենք փոխհատուցել կողոպտվածներին, գերյալներին և այլն»: Իրավագետի այս դատողությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ պետական բյուջեի միջոցները անհրաժեշտության դեպքում վերաբաշխվում են՝ ապահովելու հասարակ ժողովրդի կարիքները և երաշխավորելու սոցիալական արդարության իրագործումը: Այդ նույն տրամաբանությամբ է կառուցվում նաև բյուջեի ծախսային մասը, որը բաժանվում էր երկու բաժնի՝ տարեկան ծախս և պահուստային մաս՝ «հետագա ժամանակներում ինչ-ինչ հարկավորության համար»:

Սոցիալական արդարության սկզբունքի գործադրման մասին են վկայում նաև սոցիալական խնդիրների լուծմանը նվիրված սահմանադրահրավական նորմերը:

Բնակչության սոցիալական ապահովության խնդիրների լուծման պարտականությունը, ըստ «Որոգայթ փառաց»-ի, դրված էր Տկարների և աղքատների (Տկարաց) պետի վրա: Այդ գերատեսչության պարտականությունն էր պետության եկամուտների հաշվին ապահովել տկարների, անխնամ մնացած անձանց պահելու և բժշկական օգնություն ցույց տալու, համաճարակների (բորոտության) դեմ պայքարելու գործը: 73-րդ գլուխը իշխանություն էր տալիս Հայոց տան ծախսով՝ բոլոր մեծ քաղաքների մոտ հիմնելու լայնարձակ տուն՝ տկարներին և վիրավորներին բնակեցնելու և բժիշկների օգնությամբ նրանց դարմանելու համար: Պետության ծախսով էին պահվելու ամեն մի քաղաքի բոլոր հիվանդները՝ մաքուր զգեստներով ու չափավոր սննդով, ամեն մի նահանգի քաղաքի իշխանի գիտությամբ: Բացի այդ, տկարների ու աղքատների բուժման համար ստեղծվում էին դեղատներ՝ բժշկով հանդերձ՝ բոլոր կարիքավորներին ձրի ու անվճար դեղ բաժանելու համար: Ինչպես տեսնում ենք, այս նորմերով հեղինակը երաշխավորում է անապահով անձանց անվճար բուժօգնություն և դեղորայք ստանալու իրավունքը, որ այսօր մասամբ գործում է Հայաստանի Հանրապետությունում:

---

1 Տես Руссо Ж . Ж. Об общественном договоре. Трактаты / Пер. с фр. — М.: «КАНОН-пресс», «Кучково поле», 1998, էջեր 241-242:

Պետության հոգածության ներքո էին գտնվում որբ ու անտեր մնացած երեխաները: Ըստ 157-րդ գլխի՝ ապօրինի ծնված երեխաների համար պետության հաշվին կառուցվելու էին մանկատներ, որտեղ երեխաները պահվելու էին միչև 7 տարեկան հասակը՝ ապահովվելով կաթով, սննդով և հագուստով, իսկ 7 տարեկանից մինչև 12 տարեկանը հաճախելու էին պետական դպրոցներ՝ սովերելու կարդալ և գրել, որից հետո պետք է ազատ արձակվեին (գլուխ 158): Սահմանադրության նախագծի 159-րդ գլուխը պարտավորեցնում էր արհեստագործություն սովորեցնել «որբ ու անտեր, խենթ ու խելառի պես պարապության հետևից ընկած» տասներկուսից բարձր տարիքի պատանու կամ աղջկա: Այս հոդվածների համադրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը խոսում է ծնողազուրկ երեխաների մասին, որոնց դաստիարակելու, պարտադիր ձևով տարրական կրթություն տալու և արհեստ սովորեցնելու պարտականությունը դրված է պետության վրա:

Պետության խնամքին էին արժանանում նաև «կաղ կամ կույր, ծեր կամ պառավ» միայնակ մնացած յուրաքանչյուր աղքատ: Սոցիալական ապահովության տեսակետից պետությունը պարտավոր էր չափավոր կերպով բավարարելու նրանց կարիքները, այսինքն՝ տրամադրել նյութական օգնություն (գլուխ 161): Բացի այդ, կառուցվում էին ողորմության տներ (ծերանոցներ Ն.Ջ.)՝ հովանավորելու կաղերին, կույրերին և բոլոր տկարներին, ընդ որում, ցանկացողները կարող էին օգնել այդ մարդկանց ողորմություն (բարեգործություն Ն.Ջ.) կատարելու միջոցով: Չարաշահումներից խուսափելու համար այդ հաստատությունները պետք է ղեկավարվեին 7 «որբոց հայրեր»-ի կողմից, որոնց կազմը թարմացվելու էր 3 տարին մեկ՝ ստուգելով առկա նյութական բարիքները («ստացվածքի համեմատություն կատարելով»):

Փոխհատուցվում էին նաև բնական աղետներից գյուղացիների կրած վնասները: Օրինակ՝ 135-րդ գլխի համաձայն՝ «Հայոց երկրի որ մասում կամ որ գավառում ժանգահարություն, մորեխ, կարկուտ և վնասաբեր ուրիշ ինչ էլ պատահի, որ ավերի ցանքսերը, և ժողովուրդը զրկված մնա սննդից, այդպիսի յուրաքանչյուր ոք իր գավառի ամրոցի շտեմարանից կարող է ստանալ 25 կշիռ ցորեն իր սննդի և 25 կշիռ ցորեն՝ էլ իր ցանքսի համար անվճար և առանց փոխհատուցման, բայց Հայոց տանը շնորհակալ լինելով»: Պետությունը փոխհատուցում էր նաև բնակչությանը թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական ժամանակներում թշնամու կողմից հասցված ավերվածությունները և ունեցվածքի կողոպուտը (գլուխ 137):

Հայոց երկրի բնակչության համար սահմանվում էր պարտադիր տարրական կրթություն, որն իրականցվում էր անվճար՝ պետության միջոցներով և ուսուցանվում էր միատեսակ: Ըստ այդմ՝ «Հայոց հովանավորության տակ գտնվող ողջ երկրում... ամեն քաղաք, գյուղ, որ ունենա մինչև քսանհինգ ընտանիք, իրենց մեջ պահեն երկու ուսուցիչ, մեկը՝ մանուկներին հայաբառ ու հայատառ ընթերցանություն ուսուցանելու, իսկ մյուսը՝ տղաներին զինվորական արվեստին հմտացնելու ու կրթելու համար: Ամեն տղա և աղջիկ պարտավոր է յուրացնել ընթերցանություն, իսկ ամեն տղա՝ ընթեր-

ցանության հետ և զինվորական արվեստ՝ամենքն էլ միակերպ, առանց որևէ տարբերության» (գլուխ 101): Նորմը ուշագրավ է նաև մեզ համար, քանզի մեր օրերում պետական ռեսուրսների օպտիմալացման նպատակով մի շարք գյուղերում վերջին տարիներին փակվեցին դպրոցներ:

Վերոշարադրյալից հետևում են մի շարք եզրակացություններ.

- Շահամիրյանի սահմանադրաիրավական հայեցակարգը հիմնավորում է այն գաղափարը, որ ժողովրդաիշխանության, օրենքի գերակայության պայմաններում պետությունում ապահովվում է ոչ միայն անհատի հավասրությունն ու ազատությունը, այլ նաև ընդհանուրի բարօրությունը, որն իրականացվում է սոցիալական արդարության սկզբունքի միջոցով,
- սոցիալական արդարության սահմանադրաիրավական սկզբումքի ապահովումը պետության պարտականությունն է, որն իրականացվում է պետական միջոցներով՝ համակարգված հարկային քաղաքականության հիման վրա և իր խնդիրների լուծման հարցում ունի բյուջեի եկամուտները վերաբաշխելու իրավունք,
- ընդհանուրի բարօրությունն ապահովելու հարցում կարևոր նշանակություն են ստանում տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորումը, հատկապես՝ սեփականության իրավունքի ամրագրումը, տնտեսական գործունեության ազատությունը, տնտեսության առանձին ոլորտների զարգացմանն ուղղված խրախուսման, ապրանքների արտահանման և ներմուծման քաղաքականությունը,

Անձնական և քաղաքական իրավունքների հետ մեկտեղ սահմանադրաիրավական մակարդակում իրենց ամրագումն են ստանում անվճար տարրական կրթության, կարիքավորների անվճար բուժօգնության և դեղորայք ստանալու, միայնակ ծերերին նյութական օգնություն տրամադրելու, անհրաժեշտության դեպքում ծերանոցներում մարդկանց պետության միջոցներով պահելու, բնական աղետներից և թշնամու ավերածություններից տուժած մարդկանց փոխհատուցում տրամադրելու սոցիալական իրավունքները:

Այսպիսով, մեր կարծիքով, Շահամիր Շահամիրյանը հիմք է դրել սոցիալական պետության այժմեական գաղափարին:

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры

ИДЕЯ СОЦИАЛЬНОСТИ ГОСУДАРСТВА В «ЗАПАДНЕ ЧЕСТОЛЮБИЯ» ШААМИРА ШААМИРЯНА

В статье проанализированы идеи Ш.Шаамиряна о праве, общем благе и социальной справедливости. Представлены правоположения, которые определяют ответственность государства за обеспечение равенства и социальной справедливости. Выделены и прокомментированы нормы касающиеся налоговой политики, перераспределения бюджета, регулирования экономических отношений и защите прав социально уязвимых групп в связи с сегодняшними реалиями.

Ключевые слова: веховенство закона, обшее благо, социальная справедливость, налоги, бюджет, правовое регулирование экономических отношений, социальные права.

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center, Deputy Head of Law Department at Eurasia International University

THE IDEA OF WELFARE IN SHAHAMIR SHAVAMIRYAN'S «SNARE GLORY»

The article analyzes the ideas of Sh. Shahamiryan concerning law, common goodness and social justice. The research presentes the laws that define the responsibility of state for ensuring equality and social justice. The provisions concerning tax policy, budget redistribution, the regulation of economic relations and protection of the rights of socially vulnerable groups have been highlighted, hence relating the to the current aspects.

Key words: rule of law, common goodness, social justice, taxes, budget, economic relations legal regulation, social rights.